«ԷՎՐԻԿԱ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՐԴԱՐ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՆՈՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Գ Լ Ո Ւ Խ 1. ՀԱՎԱՆԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 4

Գ Լ Ո Ւ Խ 2. ՀԱՎԱՆԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ . 7

Գ Լ Ո Ւ Խ 3. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ 10

Գ Լ Ո Ւ Խ 4. ԱՊՐԱՆՔԻ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՑԱՆՑՈՒՄ 12

Գ Լ Ո Ւ Խ 5. ԻՐԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ 13

ՀԱՎԵԼՎԱԾ 1 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ԷՎՐԻԿԱ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) իրականացնում է գործունեություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ազատ տնտեսական մրցակցության և արդար առևտրի սկզբունքներին համապատասխան: Սույն կանոնների մշակումը և հրապարակումը նպատակ է հետապնդում ապահովել Ընկերության առևտրային ցանցի և մատակարարների միջև արդար, թափանցիկ և հավասար պայմաններով համագործակցությունը՝ բացառելով անբարեխիղճ մրցակցությունը և մատակարարների իրավունքների խախտումը:

Կանոնները մշակվել են հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» և «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենքներով նախատեսված համապատասխան կարգավորումները:

Գ Լ Ո Ւ Խ 1.
ՀԱՎԱՆԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Ընկերության կողմից հավանական մատակարարի ապրանքի ընտրության սկզբունքներն այն հիմնարար ելակետային դրույթներն են, որոնց հիման վրա գնահատվում և ընտրվում են հավանական մատակարարների կողմից առաջարկվող ապրանքները: Այդ սկզբունքներն են՝

1.1. Ապրանքի մրցունակ գին.

1.1.1. Ապրանքի գինը պետք է համապատասխանի շուկայի միջին կամ առավել շահավետ առաջարկներին՝ հաշվի առնելով ապրանքի որակը:

1.1.2. Գնահատման չափանիշներ՝

- Արժեք-որակ հարաբերակցության օբյեկտիվ համադրություն,
- Նվազագույն և առավելագույն շուկայական գների վերլուծություն,

1.2. Մատակարարման հուսալիություն և ճշգրտություն.

1.2.1. Մատակարարը պետք է խստորեն հետևի պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետներին:

1.2.2. Ապրանքների քանակը, տեսակը և որակը պետք է համապատասխանի պատվերի և պայմանագրի պայմաններին:

1.2.3. Ցանկացած ուշացում կամ պայմանագրով նախատեսված ապրանքների որակից, տեսակից կամ քանակից ցանկացած շեղում պետք է նախապես հաղորդվի Ընկերությանը և համաձայնեցվի վերջինիս հետ:

1.3. Գործընկերային բարեխիղճ վարքագիծ.

1.3.1. Կողմերը պարտավորվում են գործել ազնիվ, թափանցիկ, բարեխիղճ և զերծ մնալ անբարեխիղճ մրցակցությունից:

1.3.2. Տեղեկատվության տրամադրումը պետք է լինի ճշգրիտ և ամբողջական:

1.3.3. Ընկերությունը բացառում է խտրական պայմանների սահմանումը և կիրառումը մատակարարների հետ հարաբերությունների հաստատման, ընթացիկ ու դադարեցման փուլերում, բացառությամբ, եթե առկա են սույն կանոններից բխող ողջամիտ և օբյեկտիվ տարբերական հիմքեր:

2. Մատակարարման պայմանագրերի կնքման նպատակով հավանական մատակարարների ապրանքն ընտրելիս Ընկերությունն առաջնորդվում է մատակարարին և ապրանքին ներկայացվող նվազագույն պահանջներով: Այդ պահանջները սահմանվում են՝ ապահովելու ընկերության առևտրային ցանցում իրացվող ապրանքների որակը, մրցունակ գների ապահովումը, ինչպես նաև կողմերի տնտեսական շահերի համատեղ իրականացումը: Մատակարարին և ապրանքին ներկայացվող նվազագույն պահանջներն են հետևյալը.

2.1. Մատակարարի նկատմամբ պահանջներ.

2.1.1. Մատակարարը պետք է ունենա իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ և գրանցված լինի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.1.2. Մակատարարը չպետք է գտնվի լուծարման գործընթացում:

2.1.3. Մատակարարը չպետք է սնանկ ճանաչված լինի:

2.1.4. Մատակարարը պետք է գործի ազնիվ մրցակցության և թափանցիկության սկզբունքներով:

2.2. Ապրանքների նկատմամբ պահանջներ.

2.2.1. Ապրանքները և դրանց փաթեթավորումը պետք է համապատասխանեն ՀՀ, ԵԱՏՄ օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջներին: Բեռնարկղերը և փաթեթավորումը պետք է ապահովեն ապրանքների անվտանգությունը փոխադրման ընթացքում:

2.2.2. Ապրանքները պետք է ունենան հստակ և ամբողջական մակնշում: Ապրանքի մակնշումը, փաթեթավորումը պետք է համապատասխանի ՀՀ-ում օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2.2.3. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ապրանքը պետք է պարունակի հսկիչ (նույնականացման) նշաններ:

2.2.4. Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված և շուկայում իրացման համար պիտանի վիճակում:

2.3. Ապրանքի գնային պահանջներ.

2.3.1. Ապրանքների առաջարկվող գինը պետք է լինի այնպիսին, որ միաժամանակ ապահովի ապրանքի իրացվելիությունը և Ընկերության շահութաբերությունը (մրցունակ գին):

2.4. Մատակարար և ապրանք ընտրելիս որպես առավելություն դիտարկվող հանգամանքները.

2.4.1. Կանոնների իմաստով մատակարար և ապրանք ընտրելիս որպես առավելություն ծառայում են այն լրացուցիչ որակական, տեխնիկական կամ առևտրային բնույթի չափանիշները, որոնք գերազանցում են սույն կանոններով և գործող օրենսդրությամբ սահմանված նվազագույն պահանջները և որոնք, գնահատման գործընթացում, կարող են ապահովել մատակարարի և նրա ապրանքների առավել բարենպաստ դիրքի ընտրությունը: Մատակարար և ապրանք ընտրելիս Ընկերության համար որպես առավելություն դիտարկվում են հետևյալ հանգամանքները.

2.4.1. Մատակարարի մասով՝

2.4.1.1. Մատակարարի կողմից սեփական արտադրության ապրանքների ներկայացումը Ընկերության առևտրային ցանցում իրացման նպատակով:

2.4.1.2. Մատակարարը տվյալ շուկայում գործունեություն է իրականացնում առնվազն մեկ տարի:

2.4.1.3. Ընկերության հետ քննարկման արդյունքում ապրանքի մի շարք հատկանիշների հարմարեցումը, այդ թվում՝ արտաքին տեսքը, չափը, մակնշումը, փաթեթավորումը և այլն:

2.4.2. Ապրանքի մասով՝

2.4.1. Ապրանքի որակը բնութագրող միջազգային հավաստագրերի, սերտիֆիկատների (ներառյալ ապրանքն օրգանական գյուղատնտեսության կանոններով արտադրված լինելու մասին սերտիֆիկատի) առկայությունը:

2.4.2. Մատակարարի պատրաստակամություն ցուցաբերելու լրացուցիչ մարքեթինգային աջակցություն՝ նպատակ ունենալով ապահովելու գովազդային նյութեր, համտեսներ, և վաճառքի խթանման այլ միջոցառումներ:

Գ Լ Ո Ւ Խ 2.
ՀԱՎԱՆԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Հավանական մատակարարի և նրա ապրանքի ընտրության կարգը սահմանում է այն եղանակները, դեպքերը և գնահատման չափանիշները, որոնց հիման վրա Ընկերությունը ընտրում է նոր մատակարարներին կամ նոր ապրանքատեսակներ իր առևտրային ցանցի համար:

1.1. **Ընտրության եղանակները.** Մատակարարի և ապրանքի ընտրությունը կարող է իրականացվել հետևյալ երեք հիմնական եղանակներով.

1.1.1. **Ընկերության նախաձեռնությամբ՝** սեփական կարիքների և շուկայի վերլուծության հիման վրա:

1.1.2. **Գործող մատակարարի առաջարկով,** երբ գործող մատակարարը ներկայացնում է նոր ապրանքատեսակի մատակարարման առևտրային առաջարկ:

1.1.3. **Հավանական մատակարարի նախաձեռնությամբ,** երբ նոր մատակարարը ներկայացնում է իր առևտրային առաջարկը:

1.2. **Ընկերության նախաձեռնությամբ նոր մատակարար և ապրանք ներգրավելու դեպքերը.** Ընկերությունը նոր մատակարար և ապրանք ներգրավում է, երբ

1.2.1. Ընկերությունը նպատակ ունի համալրել գործող տեսականին նոր ապրանքատեսակներով՝ բավարարելու շուկայի փոփոխվող պահանջարկը կամ ապահովելու սպառողների համար ավելի լայն ընտրություն:

1.2.2. Շուկայում նկատվում է նոր ապրանքատեսակների նկատմամբ աճող պահանջարկ կամ փոփոխվում են սպառողների նախասիրությունները:

1.3. **Ընկերության նախաձեռնությամբ լրացուցիչ ապրանք ներգրավելու եղանակները.** Ընկերությունը, ելնելով իր առևտրային քաղաքականությունից և շուկայի պահանջարկից, կարող է լրացուցիչ ապրանք ներգրավել հետևյալ եղանակներով.

1.3.1. **Գործող մատակարարների միջոցով՝** պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող մատակարարներին ուղղելով առևտրային առաջարկ՝ Ընկերության առևտրային ցանցում իրացման նպատակով նոր ապրանքատեսակներ մատակարարելու մասին:

1.3.2. **Նոր մատակարարների որոնման միջոցով՝** շուկայում նոր մատակարարների հայտնաբերման արդյունքում նրանց համապատասխան ապրանքների մատակարարման համար առևտրային առաջարկներ ներկայացնելու միջոցով:

1.3.3. Ընկերության ուժերով լրացուցիչ ապրանքներ ներգրավելու եղանակով:

2. Մատակարարի դիմումի ներկայացում.

2.1. Գործող կամ հավանական մատակարարը համագործակցության առաջարկով պետք է ներկայացնի «Գործող կամ հավանական մատակարարի կողմից առևտրային ցանցին ներկայացվող առևտրային առաջարկի մասին» դիմում (դիմումը ձևը ներկայացված է Կանոնների Հավելված 1-ում)՝ դրան կից ներկայացնելով իրավաբանական անձի տվյալները և առաջարկվող ապրանքների ցանկը:

2.2. **Դիմումի ներկայացման ձևը.** Գործող կամ հավանական մատակարարը դիմումը կարող է ներկայացնել

1. առձեռն Ընկերության գրասենյակ:
2. Էլեկտրոնային փոստով՝ evrika.group@mail.ru էլ. փոստի հասցեին:

3. Դիմումի նախնական ստուգում.

3.1. Տեխնիկական ստուգում (մինչև 3 աշխատանքային օր):

3.1.1. Դիմումը ստանալուց հետո Ընկերության պատասխանատու աշխատակիցը ստուգում է

- տեղեկությունների լրացված լինելը,
- ապրանքների համապատասխանությունը Ընկերության գործունեության ուղղություններին և ապրանքային խմբերին,
- առաջարկված ապրանքների որակի և սերտիֆիկացման վերաբերյալ առկա փաստաթղթերը (եթե պահանջվում է):

3.1.2. Եթե դիմումը լրացված չէ կամ բացակայում են պարտադիր տվյալները, այն վերադարձվում է մատակարարին լրացնելու համար:

4. Դիմումի բովանդակային քննարկում.

4.1. Գնահատման չափանիշներ.

4.1.1. Դիմումը բովանդակային քննարկման փուլ է անցնում միայն այն դեպքում, երբ նախնական ստուգումն ավարտվել է դրական:

4.1.2. Գնահատումը կատարվում է Ընկերության կողմից հաստատված Ապրանքի ընտրության սկզբունքների հիման վրա

1. Ապրանքի մրցունակ գին:
2. Մատակարարման հուսալիություն և ճշգրտություն:
3. Գործընկերային բարեխիղճ վարքագիծ:

4.2. Քննարկման ընթացքը.

4.2.1. Դիմումները քննարկվում են Ընկերության համապատսխան աշխատակիցների կողմից:

4.2.2. Քննարկման ընթացքում կարող են պահանջվել հավելյալ փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկատվություն դիմումում նշված տվյալների, այդ մատակարարի և նրա կողմից իրացման նպատակով առաջարկվող ապրանքների վերաբերյալ, կամ ապրանքի նմուշներ՝ ուսումնասիրելու, փորձաքննության ներկայացնելու, փորձարկելու, հարցումներ իրականացնելու նպատակով:

4.3. Ժամկետ.

4.3.1. Բովանդակային քննարկումը և վերջնական որոշման ընդունումը իրականացվում է դիմումը ստանալու պահից առավելագույնը **15 աշխատանքային օրվա ընթացքում**: Այն դեպքում, երբ մատակարարի ապրանքի ընտրության համար անհրաժեշտ են լրացուցիչ գործողություններ (փորձաքննության իրականացում և այլն), ապա ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 15 աշխատանքային օրով, եթե նշված գործողության իրականացման համար անհրաժեշտ չէ այլ ժամկետ, որի մասին առևտրային ցանցը գրավոր տեղեկացնում է առևտրային առաջարկ ներկայացրած հավանական մատակարարին:

5. Որոշման ընդունում և հավանական մատակարարին տեղեկացում.

5.1. Դրական որոշման դեպքում.

5.1.1. Մատակարարի հետ կնքվում է համագործակցության պայմանագիր կամ առաջարկվում է որոշակի կարճ ժամանակահատված փորձնական ապրանքը իրացնել Կանոնների 5.1.2. կետով նախատեսված դեպքում:

5.1.2. Այն դեպքերում, երբ ապրանքների իրացվելիության ցուցանիշի վերաբերյալ չկան համապատասխան ելակետային տվյալներ, մատակարարին կարող է առաջարկվել որոշակի կարճ ժամանակահատված փորձնական ապրանքն իրացնել առևտրային ցանցի մեկ կամ մի քանի կետերում՝ առավել հստակ պատկերացում կազմելու համար: Փորձնական իրացում ապահովելը չի կարող մեկնաբանվել որպես մատակարարի առևտրային առաջարկի ընդունում:

5.2. Բացասական որոշման դեպքում.

5.2.1. Ընկերությունը մերժում է ներկայացված առևտրային առաջարկը, եթե

- չեն բավարարվում մատակարարին կամ ապրանքին ներկայացվող նվազագույն չափանիշները,
- վերադարձված դիմումը կրկին ներկայացվել է էական թերություններով, որն արգելք է հանդիսանում առաջարկը քննարկելու համար, կամ դիմումը պարունակում է ոչ արժանահավատ տեղեկատվություն,
- առաջարկվող ապրանքատեսակը ներառված չէ իրացման ենթակա ապրանքատեսակների ցանկում,
- դրա ընդունումը կարող է խաթարել առևտրային ցանցում ապրանքատեսակների բազմազանության ապահովումը կամ հանգեցնել համանման ապրանքների անհամաչափ կուտակման:
- տվյալ ապրանքատեսակի նկատմամբ առևտրային ցանցում առկա չէ պահանջարկ:

5.2.2. Հավանական մատակարարին ապրանքի ընտրության վերաբերյալ բացասական որոշման մասին գրավոր տեղեկացվում է:

Գ Լ Ո Ւ Խ 3.
ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1. Ընկերությունն իրավունք ունի դադարեցնել մատակարարի հետ համագործակցությունը՝ միակողմանիորեն լուծելով մատակարարի հետ կնքված մատակարարման պայմանագիրը, եթե առկա են սույն գլխում ամրագրված հիմքերից որևէ մեկը:

2. Մատակարարի հետ համագործակցությունը դադարեցնելու հիմքերը.

2.1. Ընկերությունն իրավունք ունի դադարեցնել մատակարարի հետ համագործակցությունը՝ միակողմանիորեն լուծելով մատակարարի հետ կնքված մատակարարման պայմանագիրը, եթե

2.1.1. պարզ է դարձել, որ մատակարարը չի համապատասխանում սույն կանոնների գլուխ 1-ի 2.1. կետով սահմանված նվազագույն չափանիշներին:

2.1.2. մատակարարը թույլ է տվել Ընկերության հետ կնքված պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտում,

2.1.3. առկա են սույն գլխի 3-րդ կետով նախատեսված հիմքերը, որոնց հաշվառմամբ Ընկերությունը հրաժարվել է մատակարարի ապրանքից, իսկ այլ ապրանք մատակարարը Ընկերությանը չի մատակարարում,

3. Մատակարարի ապրանքից հրաժարվելու հիմքերը.

3.1. Ընկերությունն իրավունք ունի հրաժարվել գործող մատակարարման պայմանագրում նշված ապրանքներից, եթե՝

3.1.1. պարզվել է, որ ապրանքը չի համապատասխանում սույն կանոններում նշված ապրանքին ներկայացվող նվազագույն պահանջներին,

3.1.2. պարզ է դարձել, որ մատակարարը չի համապատասխանում սույն կանոնների գլուխ 1-ի 2.1. կետով սահմանված նվազագույն չափանիշներին:

3.1.3. Ընկերության կողմից հրապարակված ապրանքատեսակների ցանկում կատարվել են փոփոխություններ, և տվյալ ապրանքն այլևս ընդգրկված չէ իրացման ենթակա ապրանքատեսակների ցանկում,

3.1.4. Վաճառքի արդյունքների հիման վրա հաստատվել է, որ տվյալ ապրանքն այլևս չի ապահովում իրացվելիության նվազագույն մակարդակ, որը սահմանված է Ընկերության ներքին չափորոշիչներով,

3.1.5. Ապրանքի վերաբերյալ առկա են բացասական արձագանքներ սպառողներից, ինչպես նաև առկա են ապրանքը բացասական լույսի ներքո ներկայացնող հրապարակային նյութեր, որպիսի պարագայում ապրանքի իրացվելիության մակարդակը կարող է զգալիորեն նվազել,

3.1.6. Ապրանքի վերաբերյալ առկա է իրավասու պետական մարմնի կամ դատարանի որոշում, ակտ կամ վճիռ, առ այն, որ այդ ապրանքը կամ նրա փաթեթավորումը, մակնշումը կամ ապրանքային նշանը խախտում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, այլ անձանց իրավունքները և շահերը,

3.1.7. Այլ դեպքերում, եթե տվյալ ապրանքի իրացումը կհանգեցնի Ընկերության տնտեսական գործունեության վատթարացմանը:

Գ Լ Ո Ւ Խ 4.
ԱՊՐԱՆՔԻ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՑԱՆՑՈՒՄ

1.1. Առևտրային ցանցում ապրանքների ցուցադրությունը կազմակերպվում է դարակաշարերում, ստենդներում, սառնարաններում, ինչպես նաև այլ հատուկ նախատեսված վայրերում՝ ապրանքները գնորդներին առավել տեսանելի և հասանելի ձևով ներկայացնելու նպատակով:

1.2. Ապրանքների ցուցադրման բոլոր գործընթացները իրականացվում են սույն կանոնների, տեխնիկական պայմանների և անվտանգության պահանջների պահպանմամբ:

1.3. Ընկերությունը մատակարարների համար ապահովում է հավասար հնարավորություններ ապրանքների ցուցադրման հարցում՝ առաջնորդվելով հետևյալ չափորոշիչներով.

1.3.1. Ապրանքի ֆիզիկական առանձնահատկությունները (սառնարանային ապրանքներ, ծխախոտ, կշռովի ապրանքներ և այլն),

1.3.2. Ցուցադրման ենթակա տեսականու ծավալը,

1.3.3. Արտաքին տեսքը, չափը, քաշը և համադրելիությունը դարակաշարում տեղադրված այլ ապրանքների հետ:

1.4. Ապրանքների ցուցադրման համար Ընկերությունն իրավունք ունի մատակարարներից ծառայության համար գանձել լրացուցիչ վճար կամ ստանալ զեղչեր մատակարարվող ապրանքների գնի վերաբերյալ:

1.5. Վճարի չափը որոշվում է ելնելով ցուցադրման տեղի, դիրքի, մակերեսի և ապրանքի իրացվելիությունը խթանող պայմանների համակցությունից:

1.6. Լրացուցիչ վճարի կամ ապրանքից զեղչի դիմաց Ընկերությունն իրավունք ունի մատակարարներին առաջարկել մարքեթինգային միջոցառումներ, այդ թվում՝

1.6.1. մատակարարի ապրանքային նշանով, գովազդով կամ այլ պատկերով ստենդների, սառնարանների տեղադրում,

1.6.2. մատակարարի ապրանքային նշանի, գովազդի կամ այլ պատկերի կիրառություն սայլակների, զամբյուղների վրա,

1.6.3. ակցիաների, համտեսների, պրոմո միջոցառումների, ֆլեշմոբերի կազմակերպում Ընկերության առևտրային օբյեկտներում,

1.6.4. գովազդի տեղադրում Ընկերության պաշտոնական կայք էջում, սոցիալական ցանցերում և այլ հարթակներում,

1.6.5. վիդեոգովազդի և աուդիոգովազդի ցուցադրում Ընկերության առևտրային օբյեկտներում,

1.6.6. Այլ մարքեթինգային միջոցառումներ՝ կողմերի համաձայնությամբ:

Գ Լ Ո Ւ Խ 5.
ԻՐԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ստորև իրացման ենթակա ապրանքատեսակների ցանկն է՝

1.1. Պարենային ապրանքներ

- ✓ Ալկոհոլային խմիչքներ
- ✓ Ոչ ալկոհոլային խմիչքներ
- ✓ Հյութեր, ջրեղեն
- ✓ Նպարեղեն
- ✓ Քաղցրավենիք
- ✓ Ձու
- ✓ Պահածոյացված արտադրանքներ
- ✓ Թարմ և սառեցված մսամթերք
- ✓ Կաթնամթերք
- ✓ Պաղպաղակ
- ✓ Մանկական սնունդ
- ✓ Դիաբեդիկ սնունդ
- ✓ Թեյ, սուրճ, կակաո
- ✓ Հացաբուլկեղեն
- ✓ Հրուշակեղեն
- ✓ Կենդանիների կերեր
- ✓ Միրգ, բանջարեղեն

1.2. Ոչ պարենային ապրանքներ

- ✓ Կենցաղային քիմիա
- ✓ Տնտեսական ապրանքներ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԴԻՄՈՒՄ

Գործող կամ հավանական մատակարարի կողմից առևտրային ցանցին ներկայացվող առևտրային առաջարկի մասին

Դիմումատուի տվյալները

1. Կազմակերպության անվանումը _____
2. Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի տվյալները _____
3. Պետական գրանցման համարը _____
4. ՀՎՀՀ (հարկային հաշվի համար) _____
5. Իրավաբանական հասցե _____
6. Փաստացի հասցե _____
7. Բանկային հաշվի տվյալներ _____
8. Հեռախոսահամար(ներ) _____
9. Էլ. փոստի հասցե _____
10. Կոնտակտային անձ (Անուն, Ազգանուն, պաշտոն) _____

Ապրանքների վերաբերյալ տեղեկություններ

11. Առաջարկվող ապրանքների տեսակները

Ապրանքի նկարագիրը	**Ապրանքի արտադրողը**	**Ապրանքների պահպանման և առաքման առանձնահատկությունները**	**Արտադրողի կամ մատակարարի որակի հավաստագրեր/սերտիֆիկատներ (եթե առկա են)**

Հավելյալ տեղեկություններ

12. Արդյո՞ք ընկերությունը ճանաչվել է սնանկ կամ գտնվում է լուծարման գործընթացում:Այո/Ոչ
13. Արդյո՞ք ընկերությունը ունի սեփական արտադրության ապրանքներ: Այո / Ոչ

Եթե այո, ապա ներկայացնել ապրանքների նկարագիրը:

Ապրանքի նկարագիրը	**Ապրանքների պահպանման և առաքման առանձնահատկությունները**

14. Արդյո՞ք ընկերությունը տվյալ շուկայում գործունեություն է իրականացնում մեկ տարի կամ ավելի: Այո / Ոչ

15. Արդյո՞ք առկա են ապրանքի որակը բնութագրող միջազգային հավաստագրեր, սերտիֆիկատներ, ներառյալ առաջարկվող ապրանքն օրգանական գյուղատնտեսության կանոններով արտադրված լինելու մասին սերտիֆիկատ:

16. Արդյո՞ք ընկերությունը պատրաստ է առևտրային ցանցի հետ քննարկել ապրանքի տեսքը, չափը, մակնշումը, փաթեթավորումը և այլ հատկանիշներ:

17. Արդյո՞ք ընկերությունը պատրաստ է առևտրային ցանցին հայտնել իր պատրաստակամությունը ցուցաբերելու լրացուցիչ մարքեթինգային աջակցություն (օր.՝ գովազդային նյութեր, համտեսներ, վաճառքի խթանման այլ միջոցառումներ:)

Եթե այո, ապա մանրամասնել:

_____

_____

18. Արդյո՞ք ընկերությունը նախկինում համագործակցել է առևտրային ցանցի հետ. Այո / Ոչ

19. Այլ տեղեկություն, որը դիմումատուն կարևորում է

_____

_____

20. Ստորագրելով սույն դիմումը՝ մատակարարը հաստատում է, որ ներկայացված տեղեկությունները ճիշտ են և ամբողջական:

Ամսաթիվ _____

Դիմումատուի անուն, ազգանուն _____

Պաշտոն _____

Ստորագրություն _____